# Արձանագրություն N 3

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի Dy 500մմ տրամագծով ստորգետնյա մետաղական խողովակաշարի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՐՋԷԿ-ԳՀԾՁԲ 21/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան

01.09.2017թ.
ժ. 15:00-ին

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Գևորգյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ս. Չիդեմյանը |
| | Ա. Վարդապետյանը |
| | Լ. Օհանյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

Նիստի օրակարգը

1. «ԵՐՋԷԿ-ԳՀԾՁԲ 21/17» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները:

2.Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

3. Հանձնաժողովի նիստը կասեցնելու մասին:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը:

***1. Ընթացակարգին մասնակցելու նպատակով www.armeps.am համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները:***

| Հ/հ | Մասնակցի անվանում | հասցեներ |
|---|---|---|
| 1 | «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ | ք. Եղվարդ, Նար Դոսի փող., 28ա |
| 2 | «Արմսարոյ» ՍՊԸ | ՀՀ Սյունիքի մարզ,ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15 |
| 3 | «Կոմուննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց փակուղի 8 |
| 4 | «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ | ք. Երևան, Թոթովենցի 12/28 |

***2. Ընթացակարգի հրավերի պահանջներին մասնակիցների ներկայացրած էլեկտրոնային հայտերի կազմման և ներկայացման համապատասխանության և հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.***

2.1 «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի և «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտերը ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան, որոնցում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը:

2.2 «Կոմուննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտում բացակայում է Ընթացակարգի հրավերի Հավելված N 8 առուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագիրը:

2.3 «Արմստրոյ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտում բացակայում է Ընթացակարգի հրավերի Հավելված N 3 որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը և պահանջվող լիցենզիաները:

### *3. Հանձնաժողովի նիստը կասեցնելու մասին.*

3.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արմստրոյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերի Հավելված N 3 որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունը և պահանջվող լիցենզիաները, ուստի Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 41-րդ կետով՝ որոշեց **մեկ աշխատանքային օրով** նիստը կասեցնել՝ առաջարկելով «Արմստրոյ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

3.2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- նույն օրն էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

### *4.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին*

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 04.09.2017թ. ժամը 15:00-ին, ք. Երևան Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գևորգյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Չիդեմյան

Ա. Վարդապետյան

Լ. Օհանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյան